



## Հ. Ղ. ՄԻՐՋՈՅԱՆ, Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, «Նաիրի»

հրատարակչություն, Երևան, 2006, 125 էջ:

Բանասիրության մեջ անվիճելի է այն կարծիքը, որ Նարեկացին հայ քերթության ամենամեծ լեզվաշինարարն է: Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների բառային կազմը, հանճարեղ բանաստեղծի նորակազմությունները և դրանց միջոցով ստեղծված պատկերները մշտապես հիացրել են ընթերցողներին, դարեր շարունակ լավագույն օրինակ ծառայել հայ բանաստեղծների համար: Հայտնի փաստ է նաև, որ այդ իրողությունները հաճախ մասնագիտական քննության նյութ են դարձել լույս են տեսել հոդվածներ, մեմագրություններ, պաշտպանվել ավարտաճառեր: Եվ հարցի քննությունը չեն սպառել:

Նարեկացիագիտական հետաքրքրական աշխատությամբ վերջերս հանդես եկավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Միրզոյանը՝ լույս ընծայելով «Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը» վերնագրով գիրքը: Գիրքն ամփոփում է Նարեկացու տրմազան հետազոտողի մինչ այդ հրատարակած բազմաթիվ հոդվածներից ընդամենը չորսը՝ անհրաժեշտ մշակումներով և լրացումներով: Դրանք են՝ «Նարեկացու բառաշխարհը», «Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա», «Գրիգոր Նարեկացին և հայոց գրերը», «Նարեկացիական բառի արժեքը»:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործության ուսումնասիրությամբ ամբողջովին տարված հետազոտողը նպատակ է դրել հայերենագիտության համար խիստ կարևոր մի շարք հարցեր պարզել՝ որո՞նք են Նարեկացու ստեղծած բառերը, քա-

նի՞ն են դրանք, ո՞ր ստեղծագործություններում են գործածվել, բառաստեղծական ի՞նչ ավանդույթներ է մշակել Նարեկյան դպրոցը, բառագործածության և բառաստեղծման ասպարեզում ո՞րն է Նարեկացու ազդեցությունը հետագա դարերի հայ մատենագրության վրա, ո՞րն է Նարեկացու ավանդը հայերենի բառապաշարի հարըստացման և զարգացման գործում և այլն:

Հենց սկզբից հարկավոր է ասել, որ տեսական այս հարցադրումները միաժամանակ գործնական արդյունքներ են արձանագրում: Այսպես, պրոֆ. Վ. Առաքելյանն իր «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը» աշխատության մեջ նշում է, որ բանաստեղծը միայն «Մատենա ողբերգութեան» ստեղծագործության մեջ 700-750 նորակազմ բառ է գործածել: Պրոֆ. Հր. Միրզոյանը քննել է Նարեկացու ողջ ժառանգությունը, մանրակրկիտ հաշվառել բառարանային փաստերը և պարզել, որ Հայկազյան լեզվի բառգրքում միայն Նարեկացիով վկայված բառերի թիվն անցնում է 1800-ից: Իսկ եթե հաշվի առնենք նաև, որ միայն Նարեկացիով և հետագա դարերի մատենագիրներով վկայված է ավելի քան 500 բառ, ապա կարող ենք ասել, որ X դարի հսկայի անվանն առնչվում է ավելի քան 2300 նոր բառ:

Գրքի մեջ նորակազմ բառերը ներկայացված են առանձին ցանկերով՝ տաղեր, գանձեր, խրատական բանք, Համառոտիսք բան խրատու, Մեկնութիւն Ով է դա ընթերցուածոյն Յորայ, Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի, Պատմութիւն և ճառ խաչի, Գովեստ կուսի, Գովեստ Առաքելոց, Գովեստ Յակոբայ Մծրնայ հայրապետի, Ի

<sup>1</sup> Այս հարցում անշուշտ օգտակար դեր է կատարել Գ. Մ. Մամուկյանի «Նարեկացու բառաշխարհը» հրատարակման քննական վերլուծություն՝ հոդվածը, «Բանքեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 1, էջ 84-94:

հոյակապ և յակամատր ուխտն Կճաւայ, Մատենան ողբերգութեան և տարբեր երկերով վկայված բառեր: Ահա լավագոյն և սպառնիչ նյութ գրաբարի պատմական բառարան կազմողների համար:

Այս ցանկերը կազմելիս հեղինակի համար ուղղորդող է եղել հայ բառարանագրութեան թագն ու պակեր հանդիսացող Հայկազյան բառարանը<sup>2</sup>:

Հր. Միրզոյանը բառ առ բառ կարդացել է Հայկազյան բառարանը, այնտեղից դուրս գրել Գրիգոր Նարեկացիով և նրան հաջորդած հեղինակներով վկայված բառերը, գուգադրել, համեմատել և ցանկագրել: Անչափ հետաքրքրական են ոչ միայն Գրիգոր Նարեկացիով վկայված բառերի, այլև միայն Խոսրով Անձևացիով, միայն Անանիա Նարեկացիով, Խոսրով Անձևացիով և Գրիգոր Նարեկացիով, ինչպես նաև Անանիա Նարեկացիով և Գրիգոր Նարեկացիով վկայված բառերի ցանկերը (սրանք ևս հենվում են Հայկազյան բառարանում ամբարված բառագանձի վրա): Այս նյութերը, անշուշտ, լեզվաբանները կարող են օգտագործել հայերենի պատմական բառակազմութեան, իմաստաբանութեան, գեղարվեստական լեզվի ինչ-ինչ հարցեր լուծելու ժամանակ: Հր. Միրզոյանի աշխատանքը մեկ անգամ ևս հուշում է, որ Հայկազյան բառարանը դեռևս շատ ու շատ հարցերի լուծման բանալի կարող է դառնալ (կամ էլ մեծապես նպաստել հայերենագիտական այլազան խնդիրներ պարզելուն): Այդ բառարանն առ այսօր անգերազանցելի է մնում, գրաբարի իսկական մի գանձարան, որից հետագոտողները դեռ երկար պիտի օգտվեն:

Հր. Միրզոյանի գրքի ընթերցողը բազմաթիվ առիթներ կունենա հնայվելու հայերեն բառի, մասնավորապես նարեկացիական բառի գեղեցկութեամբ, ճկունությամբ, բովանդակայնությամբ, ինչպես՝ *ասարուած ընդդէմ, մահագուշակ, յուսաբեր, սրտամնկիկ, արծուանման, շանթաչիգ, գեղագրեմ, երփնափայլ, մարբարար, մանրախոյզ* և այլն, և այլն: Այդ բառերը սոսկ գեղեցիկ չեն, այլ ժամանակի փորձու-

թյանը դիմանալով՝ շատերը հասել են 21-րդ դար և այսօր էլ խիստ հաճախական են (ի-հարկե, այս կամ այն դեպքում իմաստային փոփոխութեան ենթարկվելով): Օրինակ՝ Նարեկացու կազմած բառերի գործառական ներուժի վկայություններն են *անկըշ-ռութիւն, եղերերգութիւն, համաճարակ, համապարփակ, նախամարդ, սկզբնապատճառ, սրունքային, փիրադաւ, օղաչու, օրհներգ* և նման շատ այլ բառեր: Թվարկված բառերի մեջ, ինչպես նկատելի է, նույնիսկ տարբեր գիտաճյուղերի՝ այսօր ընդունելի և հաճախական տերմիններ կան: Դրանք վաղուց ի վեր դուրս են եկել գեղարվեստական լեզվի սահմաններից, դարձել համագործածական բառապաշարի միավորներ:

Վստահ ենք, որ Նարեկացու հեղինակային շատ նորակազմություններ դեռևս չբացահայտված խորքեր ունեն: Օրինակ՝ «Մատենան ողբերգութեան» երկում գործածված *անչնալանառ* «իբ անձը վաճառող» բառը որքա՛ն դիպուկ է անվանում մեր օրերում իրենց ձայնը, կարծիքը, էութունը վաճառող մարդկանց (հմմտ. *մարմնալա-ճառ* և այլն): Արդեն լեզվաբաններին է մնում Նարեկացու և Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների նորակազմությունների բառակազմական կաղապարները, բառերի իմաստային կառուցվածքը, բառապաշարի տարբեր շերտերի միավորների հարաբերությունները և այլ հարցեր ուսումնասիրելու խնդիրը: Նաև բառակազմական տեխնիկայի ոլորտում ազդեցությունների և փոխազդեցությունների խնդիրը:

Հստակ երևում է, որ Նարեկացին սոսկ բառաստեղծ չէ, և հարցը միայն նորակազմ բառերի հսկայական քանակը չէ: Վերոյիշյալ օրինակները պարզորոշ ցույց են տալիս այդ բառերի իրական գործառական արժեքը: Միաժամանակ՝ նաև Գրիգոր Նարեկացու էական ներդրումը հայերենի բառապաշարի հարստացման գործում:

Գրքի հեղինակի պես մենք էլ հակված չենք կարծելու, թե այս բառացանկերը վերջնական են. Հայկազյան բառարանը և

<sup>2</sup> Գ. Աւետիսեան, Խ. Միրզէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837: Կարելի է ասել, որ Հր. Միրզոյանի գիրքը լավագոյն ընձան է այս կորոդային բառարանի լույսընծայման 170-ամյակին:

հայկական նոր համաբարբառները կազմելու ժամանակ անհայտ մատենագրական նյութի բառապաշարի հաշվառման դեպքում հնարավոր են այլևայլ ճշգրտումներ: Կարող են նաև անուշադրության և այլ կարգի վրիպումներ լինել: Բայց դա չէ կարևորը. քերականները (եթե դրանք կան) կարելի է դյուրությամբ շտկել: Կարևորը հարցադրման և նրա լուծման եղանակի նորությունն է:

Պրոֆ. Հր. Միրզոյանն իր գրքում նաև հետաքրքրական դիտարկումներ, ճշգրտումներ և լրացումներ է անում: Մասնավորապես այս կամ այն բառի հեղինակային պատկանելությունը որոշելու (կամ ճշգրտելու) հարցում: Ուշագրավ են **շնորհընկալ, բարեկրօն** և ուրիշ բառերի մասին դիտարկումները, համեմատությունները Ներսես Լամբրոնացու, Հովհաննես Երզնկացու, Խոսրով Անձևացու, Ներսես Շնորհալու, Արիստակես Լաստիվերտցու, Գրիգոր Մազիստրոսի և այլոց ստեղծագործությունների, կոնկրետ տողերի, մտքերի հետ: Օրինակ՝ թե ինչպես **նահաաշիշարակեալ** բառը, որ Գրիգոր Նարեկացին է ստեղծել, Հայկազյան բառարանում վկայվել է միայն Ներսես Լամբրոնացիով (էջ 59): Կամ թե ինչպե՞ս է, որ Գրիգոր Նարեկացու անունը չեն տալիս ո՛չ Ուխտանեսը, ո՛չ Ասողիկը, ո՛չ Գրիգոր Մազիստրոսը, բայց ակնհայտ են լեզվական ընդհանրությունները վերջինիս և Նարեկացու բառապաշարի միջև (էջ 61-64): Գրքի այս հատվածները և համապատասխան ցանկերը (Նարեկացիով և հետագա մատենագիրներով վկայված բառեր, Նարեկացիով, հետագա մատենագիրներով և ժամանակագրուրեն անստույգ ժողովածուներով վկայված բառեր և այլն) լավագույն օրինակ կարող են ծառայել որևէ հեղինակի լեզուն, մասնավորապես բառապաշարն ուսումնասիրողի համար: Գրքի ամենակարևոր արժանիքներից մեկն այն է,

որ Նարեկացու բառաշխարհը մեկուսի չի քննվում, այլ իր և հետագա դարաշրջանի հեղինակների բառապաշարի համատեքստում:

Մեկ այլ տեղ, օրինակ, Հր. Միրզոյանն իրավացիորեն նշում է, որ Հայկազյան բառարանում վկայված չէ Նարեկացու ստեղծած **ջրափակ** բառն այն դեպքում, երբ մեկ այլ առիթով նույն բառարանում վկայվել է *«ի բուն բնակութիւն ծովածաւալ, ջրափակ անդրնդրափոս ահագնասարփսպ բազմաբնակ քաղաքին և անմարտնչեյի ամրոցին սքանչելոյն Կոստանդնուպոլսի»* նախադասությունը (էջ 17)<sup>3</sup>:

Գրքի հեղինակը սուկ նորակազմություններ չի արձանագրում. նրա ուշադրությունից դուրս չեն մնացել նաև իմաստային նորաբանությունները, բառագործածության, ավելի քիչ՝ նաև բարզամտության (ժամանակակից հայերենի) խնդիրները:

Պրոֆ. Հր. Միրզոյանն զիբբը հուշում է, թե դեռևս որքան անելիք կա գրաբարի բառապաշարի, մասնավորապես Գրիգոր Նարեկացու և հայ քերթության մյուս հսկաների լեզվի, բառաշխարհի, պատկերային համակարգի ըստ ամենայնի և խորքային ուսումնասիրության ասպարեզում: Եվ թե բանասիրական որքան հարցեր կան, որոնք պիտի նոր հայացքով և նոր տեսանկյունից քննվեն: Իսկապես ժամանակն է լեզվաբանական ուսումնասիրությունները դուրս բերելու նեղ սահմաններից ու կաշկանդիչ կաղապարներից (և դրանք ընդամենը՝ ատենախոսությունների ցատկատախտակ չլարձնել):

Իսկ Գրիգոր Նարեկացու ժառանգության հետազոտմանը բուրբանվեր լծված իմաստասեր Հր. Միրզոյաննի ստորագրությամբ սպասում ենք բանասիրական նոր և նույնքան հետաքրքրական հրատարակությունների:

**Ղ. Ա. ԳՅՈՒՐՉԻՆՅԱՆ**

<sup>3</sup> Ասենք, որ այդ վրիպումը հետագայում շտկվել է Առձեռն բառարանում (Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Բ տպագրություն, Վենետիկ, 1865, էջ 707):